

**Մեր պարտությունը արցախյան վերջին պատերազմու**

**ցույց տվեց, որ անկախությունը մեր ժողովրդի գերագույն արժեքն է:**

Հայրենիքի փրկությանը մասնակցում էին ոչ միայն պայմանագրային ժառանգները, այլ նաև կամավորներից կազմված խմբերը: Նրանք պաշտպանում էին Վահան գյուղում տեղակայված դիրքը և Քառվաճառի դիրքերը:

Նրանց մեջ էր նաև Կարինյան Սպարտակը: Թեկուզ առողջականը չէր ներում, բայց նա առաջիններից էր, ով հենց առաջին օրը կամավորագրվեց և մեկնեց դիրքեր: Կարինյանները մեծ հարգանք են վայելում իրենց գյուղում` Գետիկում /Ճամբարաի տարածաշրջան/: Նրանք զբաղվում են անասնապահությամբ, չնայած որ Սպարտակը ավարտել է բուհի հոգեբանության բաժինը և կատակով ասում է, որ հոգեբանորեն է մոտենում իր գործին : Նրա պատերազմ մեկնելուց հետո ընտանիքի հոգսն ընկնում է տան անդամների վրա :

Մայրը` տիկին Անժելան և հարսը` Ազգանուշը, առանց վարանելու և հաշվի չառնելով դժվարությունները, սկսում են վարել իրենց տնտեսությունը, ինչպես անում էր որդին : Քանի որ բերքահավաքի ժամանակ էր , նրանք մեծ դժվարությամբ, բայց պատվով կարողանում են հաղթահարել թե՛ հոգեբանական և թե՛ ֆիզիկական ընկճվածությունը: Նրանք զբաղվում էին ոչ միայն կենցաղային հարցերով, այլև կարողանում էին իրենց ստեղծածը ուղարկել տղաներին, ովքեր պաշտպանում էին մեր սահմանները: Նրանք, մեկը մյուսից թաքուն արտասվելով, բայց միևնույն ժամանակ միմյանց խրախուսելով, պայքարում էին , որպեսզի թիկունքում ևս խաղաղություն տիրեր: Տիկին Անժելան ժպտալով ասում էր, որ իրենց փոքրիկ խանութում, որը դարձել էր հավաքատեղի, կազմակերպում էին և դիրքեր ուղարկում թե՛ սնունդ, թե՛ հագուստ : Տիկին Ազգանուշը հպարտությամբ էր խոսում և չէր տրտնջում, որ նույնիսկ տղամարդու գործ է կատարել :

- Ես սիրում եմ իմ հայրենիքը և պատրաստ եմ ցանկացած գործունեության, միայն թե ապրենք խաղաղ և զարգացած երկրում: Օտար երկրում մենք անելիք չունենք, մենք պարտավոր ենք ապրելու և արարելու մեր հայրենի հողում: Դրա համար մենք պետք է աշխատենք , լավ կրթական համակարգ ստեղծենք, կարողանանք մեր ինքնուրույնությունը պահել : Չեմ ավստսում, որ թիկունք թիկունքի պայքարել եմ ամուսնուս հետ, քանի որ դա իմ պարտքն է, միգուցե դա նույնպես նրան թև ու թիկունք էր տալիս: Պայքարի միջոցով կարող ենք պաշտպանել մեր անկախ հայրենիքի ազատությունը: Ես շնորհավորում եմ մեր ժողովրդին Հայաստանի

**Հանրապետության անկախության 30 ամյակի առթիվ:**

**1+1 մարզային դպրոցական թերթի խմբագրություն**